

**Ջերշիլդն ընդդեմ Դանիայի, (Jersild v Denmark), 1994, Application No. 15890/89,
(Մարդու իրավունքների եվրոպական դատարան)**

Դիմումատու լրագրողի նկատմամբ մեղադրական դատավճիռ է կայացվել ատելություն քարոզելու հանցագործության փաստով մի խումբ ծայրահեղական ռասիստներից ռադիոհարցազրույց վերցնելու համար:

Թեմա՝	այլ բովանդակային սահմանափակումներ
Ենթաթեմա՝	ատելության քարոզչություն
Թեսթ՝	անհրաժեշտությունը
Սանկցիա՝	մեղադրական դատավճիռ
Որոշում՝	առկա է խոսքի ազատության իրավունքի խախտում. տասներկու ձայն ընդդեմ յոթի
Իրավասություն՝	Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Դանիա

Գործի փաստական հանգամանքները

Դիմումատուն հեռուստաձրագրի ժամանակ հարցազրույց է վերցրել «Կանաչբաճկոնավորներ» (Greenjackets) ռասիստական կազմակերպության 3 երիտասարդներից: Ծրագրի նպատակն էր ցույց տալ կանաչբաճկոնավորների վերաբերմունքը ռասիզմի նկատմամբ և հասարակության մեջ նրանց գործունեության նախապատմությունը: Քաղաքային դատարանը, մեղադրելով դիմումատուին ռասայական ատելությանը սատարելու և խրախուսելու մեջ, որոշեց, որ նա նախորոք քաջատեղյակ էր, որ հարցազրույցի ընթացքում, ամենայն հավանականությամբ, կհնչեն ռասայական խտրականության բնույթի հայտարարություններ : Հայտարարությունները հեռարձակվել են առանց որևէ հակակշռող փաստերի, որոնք ձայնազրույցումից հետո դիմումատուի կողմից կրճատվել են՝ թողնելով միայն առավել ծայրահեղական հայտարարությունները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերլուծությունը և եզրակացությունը

Սույն հայցի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ դիմումատուն ինքը որևէ առարկող հայտարարություն չի արել, այլ որպես դանիական ռադիոյի լրատվական ծրագրի հեռուստալրագրող՝ օժանդակել է դրանց տարածմանը: Գնահատելով՝ արդյոք նրան դատապարտելը և պատժելն անհրաժեշտ է՝ դատարանը հետևաբար կվերահաստատի իր նախադեպային իրավունքով սահմանված՝ մամուլի դերին վերաբերող

սկզբունքները (տես «Օբգերվերն ու Գարդիան»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության վճիռը):

Մամուլը ոչ միայն նման տեղեկություններ և գաղափարներ հաղորդելու խնդիր ունի, այլև հասարակությունը, մյուս կողմից, իրավութն ունի ստանալու դրանք: Այլապես մամուլը կկորցնի «հանրային հսկիչի» իր կենսական դերը: Թեև նախապես այս սկզբունքները վերաբերում էին տպագիր լրատվամիջոցներին, սակայն դրանք անկակասկած վերաբերում են նաև հեռարձակող լրատվամիջոցներին:

Հաշվի առնելով լրագրողի «պարտականություններն ու պատասխանատվությունը», լրատվամիջոցի հավանական ազդեցությունը կարևոր գործոն է: Ընդունված փաստ է, որ հեռարձակող լրատվամիջոցները հաճախ ունեն ավելի անմիջական և հզոր ազդեցություն քան տպագիր լրատվամիջոցները (տես *Պուրսելլը և այլոք ընդդեմ Իռլանդիայի (Purcell and others v Ireland)*): Հեռարձակող լրատվամիջոցները պատկերների միջոցով հնարավորություն ունեն հաղորդելու այնպիսի մտքեր, որոնք չեն կարող անել տպագիր լրատվամիջոցները:

Ոչ այս, ոչ էլ ազգային դատարանների խնդիրը չէ պարտադրել իրենց սեփական կարծիքը, թե լրագրողների կողմից հաղորդման ինչպիսի մեթոդներ պետք է որդեգրվեն: Այս համատեքստում Դատարանը վերահաստատում է, որ 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն արտահայտած գաղափարի և տեղեկատվության իսկությունը, այլև այն հաղորդելու ձևը (տես *Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի* վճիռը):

Դատարանը գործիլույսի ներքո կոլիտարկի գանգատի առարկա միջամտությունը՝ որպես ամբողջություն և կորոշի, թե արդյոք իշխանությունների կողմից այն արդարացնելու համար առաջ քաշված պատճառները վերաբերելի և բավարար են և արդյոք ձեռնարկված միջոցառումները համաչափ են և հետապնդում են օրինական նպատակներ: (տես վերոնշյալ «Օբգերվերի ու Գարդիանի»-ի գործով վճիռը, էջ 29-30, 59-րդ պարբերություն):

Դատարանն իր վերլուծության մեջ հաշվի կառնի այն եղանակը, որով պատրաստված էր «Կանաչբաճկոնավորների» մասին հաղորդումը, դրա բովանդակությունը, դրա հեռարձակման համատեքստը և ծրագրի նպատակը:

Հարցազրույցների վրա հիմնված լրատվական ծրագրերը, անկախ նրանից՝ խմբագրված են, թե ոչ, հանդիսանում են ամենակարևոր միջոցները, որոնցով մամուլը կարող է իրականացնել հասարակության «հսկիչի» իր կենսական դերը: (տես վերոնշյալ «Օբգերվերի ու Գարդիանի» գործով վճիռը, էջ 29-30, 59-րդ պարբերություն): Հարցազրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչնդոտի՝ հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին և նման պատիժ չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես հիմնավոր պատճառներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ դիմումատուի նկատմամբ մեղադրական դատավճիռը և պատիժը հիմնավորող պատճառները բավարար չեն համոզիչ կերպով ապացուցելու, որ միջամտությունը նրա արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում. Մասնավորապես՝ ձեռնարկված միջոցներն անհամաչափ էին «այլոց հեղինակությունը և իրավունքները» պաշտպանելու նպատակին: Հետևաբար, այդ միջոցառումները տեղիք են տվել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտմանը: